



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 23 ՅՈՒՆԻՍԿՐ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԷ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 18

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ

Տէր, իմ Աստուածս,
 հաւաքարիմ մարդուն հանդէպ հաւաքարիմ կ'ըլլաս,
 կապարեալին հանդէպ՝ կապարեալ.
 մաքրորին հանդէպ մաքուր կ'ըլլաս,
 եւ կ'ընդդիմանաս քեզի ընդդիմացողին:
 Դուն փառապեալ մարդիկը կը փրկես,
 եւ ամբարտաւան աչքերը կը ցածցնես:
 Դուն ես որ ճրագս կը վառես, Տէր, իմ Աստուածս,
 եւ խաւարս կը լուսաւորես:
 Երբ հեպս ես, առանձինս՝ ես
 ամբողջ բանակ մը եպ կրնամ մղել,
 պարիսպներն իսկ կը շրջացնես, ով Աստուած:
 Աստուծոյ ճամբան կապարեալ է.
 Տիրոջ խօսքը՝ վստահելի:
 Անկկա պաշտպան վահան է բոլոր իրեն ապաւինողներուն:
 Տիրոջմէ զար Աստուած չկայ,
 մեր Աստուծմէն զար վէմ չկայ:
 Աստուած է որ ինձի գորութիւն կը պարգեւէ,
 իմ ճամբաս կապարեալ կը դարձնէ,
 եւ ոտքերս՝ եղջերուի ոտքերուն պէս թեթեւաշարժ:
 Բարձունքներուն վրայ կանգուն կը պահէ զիս,
 ձեռքերս պապերագմի կը վարժեցնէ, այնպէս՝
 որ կարենամ բազուկներովս պղինձէ աղեղն իսկ կոտորել:
 Ինձի փրկութեանդ ասպարը փութիւր,
 քու աջդ զիս գորացուց,
 եւ քու օգնականութիւնդ զիս բարձրացուց:
 Ոտքերուս փակ ճամբաս հարթեցիր,
 եւ իմ քայլերս չխախտեցան բնաւ:
 Թշնամիներս հալածեցի եւ անոնց հասայ,
 եւ եր գոարձայ՝ մինչեւ զանոնք չսպառեցի:
 Զանոնք գեպին փապալեցի, եւ ալ չկրցան կանգնիլ,
 եւ զանոնք ոտքիս փակ առի:
 Պապերագմի մէջ գորութիւն պարգեւեցիր ինձի,
 վրաս յարձակողները ոտքերուս փակ թաւալեցիր:
 Թշնամիներս հալածական դարձուցիր,
 եւ ես ոչնչացուցի զիս արողները:
 Օգնութիւն՝ աղաղակեցին, քայց ազապող չեղաւ,

Տիրոջ աղաղակեցին, բայց պապասխան չտուաւ:
Ջանոնք հովէն քշուող փոշիի վերածեցի,
կոխկռտեցի՝ փողոցներու ցեխին պէս:
Իմ ժողովուրդիս հակառակութենէն զիս ազգայեցիր.
Եւ ազգերուն գլուխ կարգեցիր:
Անձանօթ ժողովուրդ մը ինձի ենթարկուեցաւ,
առաջին իսկ խօսքէն՝ հնազանդեցաւ ինձի:
Օտար ազգեր քծնելով եկան ինձի,
օտար ազգեր սմբեցան,
եւ սարսափով դուրս եկան իրենց թաքստոցներէն:
Անմահ է Տէրը, օրհնեալ է իմ պաշտպան Վեմս.
Եւ թող փառաբանուի Աստուած, իմ փրկիչս:
Աստուած է որ ինձի համար վրէժխնդիր կ'ըլլայ,
եւ ժողովուրդները ինձի կը հնազանդեցնէ:
Ջիս կը փրկէ թշնամիներէս,
ինձի յաղթանակ կու փայ վրաս յարձակողներուն դէմ,
եւ զիս կ'ազատէ վայրագ մարդոցմէ:
Արոր համար ալ բոլոր ազգերուն մէջ
գոհութեան երգ պիտի երգեմ քեզի, Տէր,
եւ քու անունիդ ներբող պիտի երգեմ:
Դուն ես որ մեծ օգնութիւն ցոյց փութիր
քու ընտրած թագաւորիդ՝ Դաւիթին,
մնայուն սէր ցուցաբերեցիր
քու օճեալիդ եւ անոր սերունդին:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ 25-50

Կը շարունակենք 18-րդ Սաղմոսը, ուր անցեալ շաբաթ հասանք այն տեղը, ուր Դաւիթ կը ներկայացնէր, թէ ինչպէս Աստուծոյ հաճելի եղաւ, եւ ով է այն անձը, որ Աստուծոյ հաճելի կ'ըլլայ, կամ ինչ են նախապայմանները Աստուծոյ հաճելի ըլլալու: Արդարութիւն, ձեռքերուն մաքուր ըլլալը, Տիրոջ ճամբան պահելը, Անոր կամքին համաձայն ապրիլը, Աստուծոյ դէմ ամբարշտութիւն չընելը, Աստուծոյ պարուիրանները պահելը, անբիծ ըլլալը, անօրէնութիւն գործելէ զգուշանալը: Որովհետեւ շարունակութիւնը Սաղմոսին կու գայ ցոյց տալու, թէ այս նախապայմաններէն կախում ունի նաեւ Աստուծոյ վերաբերմունքը մարդուն նկատմամբ: Հաւատարիմ կ'ըլլայ հաւատարիմ մարդուն նկատմամբ, կարարեալ՝ կարարեալին նկատմամբ, մաքուր՝ մաքուրին նկատմամբ, բայց նաեւ կ'ընդդիմանայ ընդդիմացողին, փառապետաւ մարդիկը կը փրկէ, իսկ ամբարշտուան մարդիկը կը ցածցնէ: Այս վերաբերմունքը ցոյց կու տայ, թէ ինչպիսի վերաբերմունք ունինք, ինչպիսի արքայապարութիւն ունինք, ինչպիսի դիպում ունինք, այդպիսին մեր դիմացը կը հանէ: Յիշենք Սաուղի պարագան, երբ ան թագաւոր նշանակուած էր Իսրայէլի ժողովուրդին, բայց ան երբեք ալ Աստուծոյ կամքին համաձայն չթագաւորեց ու չառաջնորդեց այդ ժողովուրդը, Աստուած ալ անոր դիմաց չար ոգիներ հանեց: Այս պարագային ցոյց կու տայ, Աստուծոյ արդարութիւնը, եւ միւս կողմէ նաեւ մեզի մտածել կու տայ, մեր միտումները, դիտումները, ըստ այնմ ըլլալու, որովհետեւ ի գուր չէ, երբ առածը կ'ըսէ. «Ինչ որ ցանես, պիտի հնձես», եթէ ոչ այսօր, օր մը անպայման մեր դիմացը պիտի ելլէ մեր ցանածը 25-27 հմր: Յիշենք Քրիստոսի խօսքը, «Ինչ չափով որ չափէք, այդ չափով պիտի չափուի ձեզի»: Փոքր չափով ողորմութիւն ցոյց կու տանք մեր նմաններուն, մեծ չափով ողորմութիւն կ'ուզենք Աստուծմէ:

28-42 հմր Դաւիթ կ'անդրադառնայ, կը գիտակցի եւ կը խոստովանի, որ Աստուած Ինք է զինք լուսաւորողը, Աստուած Ինք է անոր յաջողութիւն եւ յաղթանակ տուողը: Որքան ալ մեր մարդկային բաժինը ունինք եւ կը բերենք, բայց նաեւ կարելու է, որ անդրադառնանք որ Աստուծոյ բաժինն ալ կայ, որովհետեւ Ինք է մեզի իմաստութիւն, առողջութիւն եւ յաջողութիւն տուողը: Յաճախ ունինք այն դէպքերու ուր ամէն ինչ մեզի կը վերագրենք ըսելով, մենք ըրինք, մենք յաղթեցինք: Ճիշդ է մեր բաժինը ունինք, բայց նաեւ չնռնանք Աստուծոյ բաժինն ալ: Անոր համար ալ Դաւիթ կը գիտակցի, որ ինք առանձինն պիտի չկարենար փառապալել իր թշնամիները, բայց երբ Աստուած իր կողքին էր, ահա առանձինն ամբողջ բանակ մը ետ մղել: Առաւել եւս, Դաւիթ իր կեանքի փորձառութեամբը նաւ կու գայ ըսելու, որ Տիրոջ խօսքերը կարարեալ են ու վստահելի: Այն խոստումները որ Աստուած տուաւ Դաւիթին, ապա ժամանակը երբ հասաւ այդ խոստումները իրենց կարարունը ունեցան: Որովհետեւ Աստուած նաեւ վահան է իրեն ապաւինողներուն, այնպէս ինչպէս վահանը պարերագմի գացող զինուորին համար պաշտպանն է, նոյնպէս ալ Աստուած այդպիսի պաշտպան է: Այնպէս ինչպէս զինուորը այդ վահանին ապաւինելով կ'երթայ պարերագմի, նոյնպէս ալ Դաւիթ այդ վստահութեամբ կ'երթայ պարերագմի, նոյնպէս ալ մենք իբրեւ ինչ կը ճանչնանք զԱստուած, եւ ինչպէս կ'երթանք մեր ամենօրեայ կեանքի պարերագմի:

43-45 հմր ահա կը ներկայացնէ, թէ ինչպէս Աստուած Դաւիթ ազատեց զինք արողներէն եւ օտար ժողովուրդներ իրեն ենթարկուեցան: 46-48 հմր անգամ մը եւս ներքող կ'երգէ Աստուծոյ, որ զինք կ'ազատէ իր թշնամիներէն եւ վայրագ մարդոցմէ:

49-50 հմր ահա այս բոլորին համար ներքող պիտի երգէ Աստուծոյ բոլոր ազգերուն մէջ, որովհետեւ Աստուած օգնութիւն եւ սեր ցուցաբերեց Դաւիթին եւ անոր սերունդին նկատմամբ:

Այս Սաղմոսը եթէ տողաբար կարդանք, այսինքն՝ պարզ իր գրուածէն անդին, ապա պիտի տեսնենք որ ան նաեւ Մեսիական Սաղմոս է, այսինքն՝ Քրիստոսի մասին մարգարէութիւն: Այսպէս, 1-6 համարները Քրիստոսի մահուան մասին, 7-18 համարները Անոր յարութեան, 19-27 համարները՝ Անոր բարձրացումը, 28-42 համարները՝ Անոր յաղթանակը, եւ ի վերջոյ՝ 43-50 համարները՝ Անոր թագաւորութիւնը: